



## ՄԱՅՐ ԱԹ Ո Ռ Ո Ւ Խ

Հովհանքի Յ-ին, շարաթ օրը, «Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսավորչին» եկեղեցական տոնի առթիվ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Մայր Տաճարում, Ս. Իշման սեղանի վրա: Պատարագին էր քարձրապատիվ Տ. Գեղորգ ծայրագույն փարոքապետ Վաթիանը: Սուրբ պատարագին ներկա էին քաղմաթիվ հավատացյալներ և ուստափուրներ:

\*\*\*

Հովհանքի 8-ին, հինգշաբթի օրը, «Սրբոց թարգմանչացն Ասհակայ և Մեսրոպալայ» եկեղեցական և ազգային մեծ տոնակատարության կատակցովիամբ, Օշական գյուղում, Ս. Մեսրոպի նվիրական գերեզմանի վրա կառուցված նույնանուն գեղեցիկ ու հոյակապ տաճարում, մեծ հանդիսավորությամբ մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագին էր քարձրապատիվ Տ. Գեղորգ ծայրագույն վարդապետ Վաթիանը: Տաճարը լիբն էր քաղմաթիվ հավատացյալներով, և ուստափուրներով: «Հայր մերակ առաջ պատարագից հայրը քարոզեց հավուր պատշաճի՝ վեր հանելով իր քարոզի մեջ մեր նախնի երանելի առաջին թարգմանիչների, հանճարել ուստուցիչներ Ս. Սահակի, Ս. Մեսրոպի և նրանց աշակերտների կատարած վիթխարի մշակությին-կրթական աշխատանքն ու գործունեությունը հայ կյանքի ու մտքի նվիրական անդաստանում: Իր քարոզը հայր սուրբը վերշացրեց հետեւյալ խոսքերով: «Միրեղի եղբայրներ և քույրեր, միշտ պայծառ ու նվիրական պահեցե՛ք Ս. Թարգմանչաց ինկելի հիշատակը, սիրեցե՛ք ձեր լեզուն, ձեր Հայրենիքը, ձեր պատմությունն ու մշակությը. այդպիսով գուր ամենամեծ հարգանքը մատուցած կիմնեք նրանց անվան ու անմահ հիշատակին»:

Սուրբ պատարագից հետո, Մայր Աթոռի ողջ միաբանության մասնակցությամբ, կատարվեցին հոգեհանգստության սրբազնությունը:

Իր օրը Օշական էին եկեղեց բազմաթիվ ուստափուրներ շրջակա գյուղերից, բազմաթիվ մատաղներ էին կտրվում եկեղեցու բակում ավանդական սովորությունների համաձայն: Ժողովրդական գեղեցիկ երգերն ու պարերը շարում կլիషտում էին երկար ժամանակ գրագրություններ: Բազմաթիվ մոժեր էին բոցկրտում Ս. Մեսրոպի հանգստարանում: Հայ հայտացյալը ծնկաշոր համբուրում էր հայ մեծ մարդու, հանճարեղ ուստուցչի նվիրական ու խնկարուց գերեզմանը, Կրանենի Մաշտոցը:

Անորից բավական անց էր, երբ Մայր Աթոռի միաբանությունը վերադարձավ էջմիածին: Կեսօրից բավական անց էր, երբ Մայր Աթոռի միաբանությունը վերադարձավ էջմիածին:

\*\*\*

Հովհանքի 11-ին (Գիւտ տփու Ս. Աստուածածնի), կիրակի օրը, հանդիսավոր սուրբ պատարագ տեղի ունեցավ Մայր Տաճարում Ավագ սեղանի վրա: Օրվա պատարագին էր գերանոր Տ. Սահակ Կովիսկոպուր:

Տաճարում շարժմելու տեղ չկար: Այդ օրը միենույն ժամանակ լրանում էր երջանկահշատակ Տ. Տ. Գեղորգ Զ. Կաթողիկոսի օծման 9-րդ տարեդարձը: «Հայր մերակ առաջ, Կաթողիկոսական տեղապահի փոխանորդ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիս ժողովությանը, քարձրանալով սեղան, սրտառուց քարոզությունը. Նրա քարոզը նվիրված էր երջանկահշատակ Տ. Տ. Գեղորգ Զ. Կաթողիկոսացման 9-րդ տարեդարձի լրանալում:

Սրբազն հայրը խոր ակնածանքով բնորոշեց հանգուցյալ Հայրապետի կյանքն ու գործունեությունը, որը նվիրված էր միայն հայ ժողովոդին, Հայ Եկեղեցու բարօրությանն ու ծաղկմանը: Ընդան կորցնելով, — ասաց սրբազնը, — Հայ Եկեղեցին որբացական կամաց հայության պատվեց Հայրապետական Գահը.

Հայ հավատացյալը, աշխարհի բոլոր ծայրերում, դառնորեն սպաց իր իմաստուն Հովկապետի դառնակակիծ մահը»:

Վերջում, նա դիմելով հավատացյալ հայ ժողովովին, ասաց. «Միրելիք, մեր սուզը շարունակվում է և կշարունակվի, քանի ոեն ու քողը չի վերացված Ս. Լուսավորչի նվիրական Գահից: Աղոթենք, որ այն շուտով վերանա, և ամենաբարձրյալ Աստուծո օգնականությամբ, այս լուսավորչահաստատ Ս. Գահին նստի արժանավոր մի նոր Հայրապետու»:

Սուրբ պատարագի ավարտից հետո, Մայր Աթոռի ամբողջ միաբանովիյան մասնակցությամբ, դրամ, երջանկահիշատակ Գեորգ Զ. Հայրապետի թարմ ծաղկիներով գարորառված գերեզմանի վրա կատարվեց հոգեհանդիսություն: Արարուղովիյանը ներկա էին բազմաթիվ հավատացյաներ և ովատալորներ: Ժողովրդի կողմից բազմաթիվ ծաղկեփնջիր դրվեցին հանգուցյալ Հայրապետի թարմ ժողակույտի վրա:

\*\*\*

Հովկիսի 25-ին, կիրակի օրը, Վարդավառի (Պայտառակերպության Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի) եկեղեցական մեծ տոնակատարության կապակցովիյամբ, Մայր Տաճարում, Ավագ սեղանի վրա, բազմաթիվ հավատացյաների ներկայությամբ, մատուցվեց հանդիսավոր տուրբ պատարագ: Օրվա պատարագին էր բարեկյան Ս. Խորեն ավագ քահանա Շուշանյանը:

«Հայր մերակից առաջ բարձրապատիվ Տ. Գեղրդ ծայրագում վարդապետ Վաթյանը հավուր պատշաճի քարոզեց, բացատրելով հավատացյաներին Տիրոջ պայտառակերպության խոշոր, ոգեպնդիշ ու բարոյական նշանակությունը:

Ս. Պատարագի ավարտից հետո, դրամ, վանքի բարձր, երկար ժամանակ լսվում էր հավատացյալ ովատավորների ուրախ երգն ու նվազը: Հազարամյակներ հետո, Վարդավառի քրիստոնեական տոնակատարությունը դեռ իր մեջ պահել է հայ հին հավատարիների մի քանի առվորություններ: Այդ օրը ժողովրդի մեջ շատ շատերը շրջանություն էին կատարում իրար վրա և բազմաթիվ ներմակ աղավնիներ թուցնում, առանց գիտակցելու, որ Վարդավառի տոնին (հին հեթանոսական առումով), իրենցից 2.000 տարի առաջ, նույն էին անում իրենց նախնիքը Աստղիկ դիցուու պաշտամունքի տոնակատարության օրը:

\*\*\*

Հովկիսի 26-ին, Վարդավառի տոնակատարության հաջորդ օրը, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր պատարագ՝ նվիրված մեռելոց հիշատակին: Պատարագին էր բարեկյան Տ. Մկրտիչ քահանա Գամաղելյանը:

Սուրբ պատարագի ավարտից հետո կատարվեցին հոգեհանգստյան սրբազն արարողություններ՝ համայն ննջեցյալներին նվիրված: Ներկա էին բազմաթիվ հավատացյալներ:

\*\*\*

Հովկիսի 31-ին, Մայր Աթոռ Ա. Էջմիածին ժամանեց դանիական երիտասարդության 19 մարտուց բաղկացած պատվիրակությունը, որին ղեկավարում էր պարոն Օվանայնհարդտ Մելլերը: Պատգամավորությանը վանքի բակում դիմավորեցին Մայր Աթոռի միաբանները:

Այսուհետև Հյուրերը Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Մահակ եպիսկոպոսի առաջնորդությամբ եղան Տաճարի ներսում, ուր նրանց մանրամասն բացատրություններ տրվեցին Տաճարի զինության, ժամանակի, ճարտարապետական կառուցվածքի, մանրանկարչության վերաբերյալ: Հյուրերը եղան նաև Տաճարին կից եկեղեցանագիտական թանգարանում, ուր տեսան արժեքավոր հին եկեղեցական սպասներ, զգեստներ և այլ հազվագյուտ իրեր, որոնց մասին նրանց ամենամանրամասն բացատրություններ էին տալիս Մահակ եպիսկոպոսը և միաբանության մյուս անդամները: Բացատրությունները լսելուց հետո, Հյուրերը հետաքրքրեցին Մայր Աթոռի ներկա վիճակով Հովկուր Ճեմարանի դրությամբ, Հայ Եկեղեցու դավանանքի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Նրանց հարցասիրությանը մեծ սիրով գործացում էին տալիս գերաշնորհ Տ. Մահակ եպիսկոպոսը և միաբանության մյուս անդամները:

Մեկնելուց առաջ Հյուրերը իրենց շնորհակալությունները հայտնեցին միաբանությանը՝ իրենց ցուց տրված ուշադիր ու ազնիկ վերաբերմունքի համար:

\*\*\*

Օգոստոսի 6-ին, Մայր Աթոռ Ա. Էջմիածին այցելեց շվեյցարական երիտասարդական պատվիրակությունը: Պատվիրակության անդամները ամենայն մանրամասնությամբ Մայր Տաճարը գիտելուց և բացատրություններ լսելուց հետո, այցելեցին նաև Տաճարին կից եկեղեցահանդիտական թան-

դարանը, ուր նրանք հիացմունքով դիտեցին Հնադարյան եկեղեցական զգեստների, սպասների և իրերի զանազան գեղեցիկ նմուշներ: Հյուրերին ուղեկցում, բացառում և նրանց հարցերին պատասխանում էին գերաշնորհ Տ. Սահակ Խաչիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և միաբանության մյուս անդամները:

Վերջում հյուրերը, մեկնելուց առաջ, փրենց շնորհակալությունները հայտնեցին միաբանության՝ իրենց ցուց տրված լավագույն բնորոշնելության համար և գոհ վերադարձան Երևան:

\*\*\*

Նույն օրը Մայր Աթոռ Ս. էջմիածին ժամեցին նաև կուլտուրայի և արվեստի շվեդական գործիչները, որոնք նույնպես ծանոթացան Տաճարի, թանգարանում եղած իրերի և միաբանության հետ:

\*\*\*

Օգոստոսի 14-ին, շաբաթ օրը, Շողակաթ Ս. էջմիածնի տոնի կապակցությամբ, Մայր Տաճարում, Ս. Իշման սեղանի վրա մատուցվեց Հանդիսավոր սուրբ պատարագ: Պատարագին էր բարեշնորհ Տ. Կոստանդին վարդապետ Թաղանյանը: Ներկա էին բազմաթիվ հավատացյալներ:

\*\*\*

Օգոստոսի 15-ին, Ս. Աստվածածին Վերափոխման տոնի կապակցությամբ, Մայր Տաճարում, Ավագ սեղանի վրա մատուցվեց Հանդիսավոր սուրբ պատարագ: Պատարագին էր գերաշնորհ Տ. Սահակ Խաչիսկոպոս Տեր-Հովհաննիսյան:

Այդ օրը և դրանից դեռ մեկ օր առաջ, Ս. էջմիածին ուստի էին եկել բազմաթիվ ուս-

տավորներ: Եկել էին նրանք շրջակա գյուղերից, մոտիկ ու հեռու քաղաքներից, լցվել էին Մայր Աթոռ՝ կատարելու իրենց ուխտը Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին:

Ամբողջ գիշերը և հաջորդ առավոտ անվերջ շարունակվում էին ժողովրդական ուրախությունները, հայկական ժողովրդական պարերն ու երգերը վերջ չտնեին, թնդում էր ամբողջ վանքը այդ ուրախառիթ ձախներից, ժողովրդական մեծ ուսմագնացությունն էր այդ օրը, բառի խսկական իմաստով: Հայ հավատացյալը, իր պապենական վաղեմի սովորության համաձայն, մաքրու սրտով կտրում էր իր մատաղը, իր զոհը մատուցուած և անհամբեր սպասում, որ այդ օրը խաղողի սրբազն օրնությունը կատարվեր:

Կեսօրին, սուրբ պատարագի ժամին, Տաճարում անկարելի էր շարժվել, խիտ առ խիտ մարդկային զանգվածներ լցվել են ներս՝ աղօթելու, սուրբ պատարագը լսելու:

Տաճարում տոթ է, խեղոտկ: Սուրբ պատարագը շարունակվում է: Պատարագի վերջում կատարվում է խաղողի օրնությունը: Ամբողջ Տաճարը ալեկոծվում է, հորձանք տալիս, շարժվում են մարդկեկ գետի բեմը, մի-մի մասնիկ ստանալու օրնված պտույթը:

Սուրբ պատարագի ավարտից հետո դեռ երկար ժամանակ շարունակվում են ժողովրդական ուրախությունները մինչև ուղեկու:

\*\*\*

Հաջորդ օրը, օգոստոսի 16-ին, Մայր Տաճարում, Ավագ սեղանի վրա մատուցվեց Հանդիսավոր սուրբ պատարագ՝ նվիրված մեռելոց հիշատակին: Պատարագից հետո կատարվեցին հոգեհանգստյան սրբազն արարողություններ՝ նվիրված Համորին ննջելոց:

